## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 5

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով.

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել Արգել համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 18-ի հերթական թիվ 2 նիստի օրակարգը

1. Կոտայքի մարզի Արգել համայնքի սեփականությանը պատկանող 0,02502 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին
2. Արգել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության 0,00476հա հողամասն առկա 47,6քմ արտաքին մակերեսով շինության հետ միասին Ալվինա Վրեժի Հովհաննիսյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին
3. Արգել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության 0,0073հա հողամասը առկա շինություններով ուղղակի վաճառքով կառույց իրականացրած անձին օտարելու մասին
4. Արգել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի նշանակության 0,00737հա հողամասն առկա շինություններով ուղղակի վաճառքով կառույց իրականացրած անձին օտարելու մասին
5. Արգել համայնքի սեփականություն հանդիսացող 59,02 քառակուսի մետր բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքի <<ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ>> ՍՊԸ-ի կողմից գնահատված արժեքին համաձայնություն տալու մասին :
6. Արգել համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 78-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 6

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ 0,02502 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 17-րդ կետով և հիմք ընդունելով Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 29-ի թիվ 7 դրական եզրակացությունը

համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Կոտայքի մարզի արգել համայնքի սեփականությանը պատկանող /սեփականության վկայական թիվ 28112018-07-0102 / 0,0 2502հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 07-017-0552-0001-ից/ հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը .

ա) Հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նշանակության հողամասերի շարքից փոխադրել բնակավայրերի նշանակության հողամասերի շարքին :

բ) Հողամասի գործառնական նշանակությունը այլ հողատեսքից փոխադրել բնակելի կառուցապատման հողատեսքին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 7

ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00476ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԿԱ 47,6 ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԱԼՎԻՆԱ ՎՐԵԺԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերի և 2006 թվականի մայիսի 18 -ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի ,հաշվի առնելով Ալվինա Հովհաննիսյանի դիմումը

**համայնքի ավագանին որոշում է**

1. Ալվինա Վրեժի Հովհաննիսյանին, Արգել գյուղի 1-ին փողոց 5/2 հասցեում գտնվող , սեփականության իրավունքով պատկանող (հիմք սեփականության վկայական թիվ 09012020-07-0081զաղտնաբառ KZETCLXPAHU4) Արգել համայնքի վարչական տարածքում գտնվող 07-014-0061-0016հողակադաստրային ծածկագրով բնակավայրի նշանակության հասարակական կառուցապատման 0,005 հա հողամասին կից Արգել համայնքի սեփականություն հանդիսացող 1-ին փողոց 5/3հասցեում գտնվող (հիմք սեփականության վկայական թիվ 17012020-07-0081զաղտնաբառ 83SXQQSKHAHA, կադաստրային ծածկագիր՝ 07-014-0061-0018) 0.00476 հա մակերեսով բնակավայրի նշանակության հասարակական կառուցապատման հողամասն առկա 47,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով օրինակացված ինքնակամ առևտրի սրահի հետ միասին / կադաստրային ծածկագիր 07-014-0061-0018-001/ տվյալ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով, հողի կադաստրային արժեքով՝ 139944 /մեկ հարյուր երեսունինը հազար ինը հարյուր քառասունչորս / դրամով , օրինակացված ինքնակամ առևտրի սրահը 899640 / ութ հարյուր իննսունինը հազար վեց հարյուր քառասուն / դրամով ուղղակի վաճառքով օտարել Ալվինա Վրեժի Հովհաննիսյանին :

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ալվինա Հովհաննիսյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալվինա Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

_____ ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
_____ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
_____ ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
_____ ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
_____ ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 8

### ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0073 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՅՑ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33 –րդ կետի գ) ենթակետի պահանջի , հիմք ընդունելով կառույցն իրականացրած անձի Գոռ Սերժիկի Հակոբյանի դիմումը

**համայնքի ավագանին որոշում է**

1.Արգել համայնքի սեփականություն հանդիսացող / սեփականության վկայական թիվ 11022020-07-0049 գաղտնաբառ 1ZAMD9P7XSNI /1-ին փողոց թիվ 14 հասցեում գտնվող 0.0073 հա բնակավայրի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը /կադաստրային ծածկագիր 07-014-0049-0006/ 214 620/երկու հարյուր տասնչորս հազար վեց հարյուր քսան / դրամ արժեքով, հողամասի վրա առկա 73,0քառակուսի մետր արտաքին մակերեսով առևտրի սրահը / կադաստրային ծածկագիր 07-014-0049-0006-001/ 1379700 / մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունինը հազար յոթ հարյուր / դրամ արժեքով գնման նախապատվության իրավունքով , ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած անձ Գոռ Սերժիկի Հակոբյանին:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գոռ Սերժիկի Հակոբյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գոռ Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 9

### ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00737 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՅՑ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33 –րդ կետի գ) ենթակետի պահանջի , հիմք ընդունելով կառույցն իրականացրած անձի Սաթենիկ Աստուրի Հակոբյանի դիմումը

համայնքի ավագանին որոշում է

1.Արգել համայնքի սեփականություն հանդիսացող / սեփականության վկայական թիվ 11022020-07-0079 զաղտնաբառ 9UUWIBMMU4GM /14-րդ փողոց թիվ 10/1 հասցեում գտնվող 0.00737 հա բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը /կադաստրային ծածկագիր 07-014-0020-0028/ 216678/երկու հարյուր տասնվեց հազարվեց հարյուր յոթանասունութ / դրամ արժեքով, հողամասի վրա առկա 4,69քառակուսի մետր արտաքին մակերեսով սան հանգույցը / կադաստրային ծածկագիր 07-014-0020-0028-001/ , 14,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ամառային խոհանոցի մի մասը / կադաստրային ծածկագիր 07-014-0020-0028-002/ , 3,96քառակուսի մետր պարիսպը / կադաստրային ծածկագիր 07-014-0020-0028-003 և 07-014-0020-0028-003 /, 95130 / ինսունհինգ հազար հարյուր երեսուն / դրամով արժեքով գնման նախապատվության իրավունքով , ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած անձ Սաթենիկ Աստուրի Հակոբյանին:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սաթենիկ Հակոբյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սաթենիկ Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 10

### ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 59,02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ <<ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ>> ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի , 77-րդ հոդվածի 3-րդ կետի և 78-րդ հոդվածի պահանջների

**համայնքի ավագանին որոշում է**

1. Համաձայնություն տալ Արգել համայնքի սեփականություն հանդիսացող / սեփականության վկայական թիվ 16012020-07-0033 գաղտնաբառ HTTK1MCLM4H8 / համայնքի 5-րդ փողոց 1-ին շենք թիվ 51 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի 59.02 քառակուսի մետր հասարակական նշանակության ոչ բնակելի տարածքի <<ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ>> ՍՊԸ-Ի կողմից գնահատված 826000 / ութ հարյուր քսանվեց հազար / դրամ արժեքին:

2.Հաշվի առնելով սույն որոշման առաջին կետը, Արգել համայնքի 5-րդ փողոց 1-ին շենք թիվ 51 հասցեում գտնվող, բազմաբնակարան շենքի 59.02 քառակուսի մետր հասարակական նշանակության ոչ բնակելի տարածքը , 826000 / ութ հարյուր քսանվեց հազար / դրամ արժողությամբ ավելացնել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերում

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 11-Ն

## ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2019**ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ **26-Ի** ԹԻՎ **78-Ն** ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34 հոդվածի պահանջի

համայնքի ավագանին որոշում է

Արգել համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի << ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 78-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի:

*Կողմ -5* *Դեմ-0* *Ձեռնպահ-0*

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

Հավելված
Արգել համայնքի ավագանու 2020թվականի
փետրվարի 18-ի թիվ 11-Ն որոշման

| Ծրագիր | Հոդված | Հոդվածի անվանումը | 18,02.2020 թվականի դրությամբ | Պակասեցում /-/ կամ ավելացում /+/ | Ճշտված բյուջե |
|---|---|---|---|---|---|
| | | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | | | |
| 11-1-2 | 4891 | Պահուստային միջոցներ | 4500,0 | -2000,0 | 2500,0 |
| | | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| 4-5-1 | 5113 | Շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում | 17591,9 | +2000,0 | 19591,9 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 22091,9 | 0 | 22091,9 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ